

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ՁՈՐԱԳԼՈՒԽ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից, խորհրդակցական կարգով գործող
ՀԶԲԾ կառավարման հանձնաժողովի կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Հրայր Կարապետյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016թ. հունվարի 15-ի թիվ 3
 որոշմամբ

ՁՈՐԱԳԼՈՒԽ 2017թ.

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀԱրագածոտնի մարզի Ձորագլուխ գյուղական համայնքի 2017-21թթ. զարգացման քառամյա ծրագիրը (ՀԶԲԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԲԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

ՀԶԲԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա ենթակառուցվածքը և մատուցվող ծառայությունները.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Ելնելով այն իրողությունից, որ համայնքը փոքր է իր բնակչության թվաքանակով և ֆինանսական կարողություններով, համայնքի ՏԻՄ-երն ի վիճակի չեն իրականացնել օրենքով իրենց վերապահված լիազորություններն ամբողջ ծավալով և բոլոր ոլորտներում: Այդ պատճառով սույն ՀԶԲԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԲԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը), որոնց կառավարման համար նախատեսվել են որոշ գործողություններ ու միջոցառումներ:

Համայնքի 2017-21թթ. ՀԶԲԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶԲԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող խորհրդակցական մարմինը՝ ՀԶԲԾ-ի կառավարման հանձնաժողովը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային գործողության մեջ դրված զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխընթերցում ՀԶԲԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

2. ՀՀԾԶ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀՀԾԾ-ն բաղկացած է 4 գլխից

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն
2. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում
3. ՀՀԾԾ ֆինանսաֆորում
4. ՀՀԾԾ մոնիթորինգ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնում գործում են

1. Ձորագլխի Յու.Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոցը, որտեղ սովորում են 47 աշակերտ: Դպրոցն ունի 25 աշխատող, որից 19-ը մանկավարժ, 6-ը տեխնիկական աշխատող: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է դիզվառեղիքով: Դպրոցի շենքը ներկայումս կարիք ունի ներքին հարդարման: Դպրոցն ունի նաև սպորտային դահլիճի և համապատասխան գույքի կարիք:

2. Բուժկետ՝ Ապարան քաղաքի բժշկական կենտրոնի ենթակայությամբ, 1 աշխատողով, 2014 թվականին համայնքի բյուջեի և «Վորլդ Վիժն- Հայաստան» կազմակերպության Ապարանի տարածաշրջանային գրասենյակի համատեղ միջոցներով բուժկետում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ:

Համայնքում առաջնային խնդիր է համարվում բնակչության զբաղվածությունը: Այժմ բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն ու հողագործությունն է: Անասնապահության ոլորտում զարգացած է խոշոր եղջերավոր անասունների, մանր եղջերավոր անասունների ինչպես նաև խոզերի բուծումը, հողագործության ոլորտում՝ կարտոֆիլի, կաղամբի և հացահատիկի մշակության ճյուղը: Սակայն համայնքում առկա մի շարք խնդիրների պատճառով գյուղատնտեսական ապրանքն արտադրվում է հիմնականում սեփական սպառման համար:

Համայնքը չունի մշակույթի տուն: Ներկայումս մշակութային կյանքը համայնքում անբավարար վիճակում է: Մշակույթի տան բացակայությունն իր բացասական ազդեցությունն է թողնում նաև երիտասարդների հետ տարվող աշխատանքներում: Մի խոսքով, մշակույթի տան նոր շենքի կառուցումն օդ ու ջրի պես անհրաժեշտ է համայնքին, այս հարցում ակնկալվում է ՀՀ կառավարության աջակցությունը: Համայնքում համայնքի ակտիվ երտասարդների կողմից ձևավորվել է ֆուտբոլի խմբակ, որը արժանացել է Ապարանի միջամայնքային 2013 թ. Ֆուտբոլային առաջնության գավաթի: Խմբակը մարզագույք ձեռք է բերում համայնքի ղեկավարի աջակցությամբ

Համայնքի գրադարանը տեղակայված է համայնքային կենտրոնի շենքում, ունի մոտ 4800 կտոր գիրք: Գրադարանի շենքային պայմանները բավարար չեն գրքային ֆոնդի նորմալ պահանման համար:

Մեկ ուրիշ գրադարան գործում է նաև համայնքի միջնակարգ դպրոցում՝ մոտ 2500 կտոր գրքային ֆոնդով: Այդ գրադարանի պայմանները համեմատաբար լավ են:

Համայնքի սեփականություն համարվող ինքնահոս եկող 2 խմելու ջրատարները ունեն կապիտալ վերանորոգման կարիք: Խմելու ջրով ապահովված են համայնքի համարյա բոլոր բնակիչները, սակայն ոչ բավարար քանակությամբ:

Համայնքում աղբահանությունն իրականացվում է մասնակիորեն՝ համայնքի բնակիչների սուղ միջոցներով:

Համայնքում կա 2 գերեզմանատուն, որոնցից մեկը գյուղի հին գերեզմանատունն է և ներկայումս չի գործում, իսկ մյուսը գործում է, սակայն ցանկապատված չէ / անասուններն անարգել մուտք են գործում գերեզմանատան տարածք՝ առաջացնելով բնակչության արդարացի դժգոհությունը / և ապահովված չէ էլեկտրական հոսանքով / դժվարանում է գերեզմանների կառուցապատման, վերանորոգման և վերականգնման աշխատանքները՝ առաջացնելով ֆինանսական և տեխնիկական անհարմարություններ բնակիչների համար:

Համայնքում բազմաբնակարան բնակելի շենքեր չկան, իսկ բնակելի առանձնատների քանակը 75 է, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 10 000 քմ:

Համայնքի աշխատուժի և բնակիչների ֆինանսական միջոցների հաշվին պարբերաբար իրականացվում են համայնքի բնության, շրջակա միջավայրի, հուշարձանների և դրանց հարող տարածքների մաքրման ու պահպանման աշխատանքներ: Սակայն լիարժեք պահպանման համար անհրաժեշտ են լրացուցիչ ֆինանսական միջոցներ, որոնցից համայնքը զուրկ է:

ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Ձորագլուխ գյուղը հիմնադրվել է 1828 թվականին: Գյուղի բնակիչները գաղթել են պատմական Վասպուրական նահանգի Արտազ գավառի Քիշմիշթափա գյուղից:

Գյուղը գտնվում է Ապարան քաղաքից 14 կմ հարավ արևելք, Ծաղկունյաց լեռնաշղթայի ստորոտում, ծովի մակերևույթից 2053 մ բարձրության վրա: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 65 կմ, մարզկենտրոնից՝ 45 կմ, տարածաշրջանային կենտրոնից՝ 14 կմ: Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Կոտայքի մարզին, Մոսկվայի և Թթուջուր համայնքներին: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Գյուղում հաճախակի են չորային տարիները, որից հիմնականում տուժում են գյուղատնտեսական աշխատանքները:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2776.9 հա, այդ թվում՝

- գյուղատնտեսական նշանակության հողեր – 1793.7 հա,
- բնակելի ֆոնդի հողեր – 47.8 հա,
- բնապահպանական նշանակության հողեր – 11.5 հա,
- անտառային և ջրային ֆոնդերի հողեր – 903.6 հա,

- արդյունաբերական նշանակության հողեր – 19.1 հա,
- էներգետիկայի ենթակառուցվածքների հողեր – 1.2 հա:

1991թ. հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհմանը մասնակցել են համայնքի 84 տնային տնտեսություններից 83-ը, 132 ընտանիքներից՝ 131-ը: Համայնքի սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է 1,48 հա, այդ թվում 1.4 հա-ը՝ վարելահող (տնամերձի հետ միասին), 0,08 հա-ը՝ խոտհարք:

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 353 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 188 և կանայք՝ 165: Բնակչության տարիքային և սոցիալական կազմն այսպիսին է՝

- 0-6 տարեկան -50 մարդ
- 7-17 տարեկան –42մարդ
- 18-62 տարեկան –224 մարդ
- 63 և ավելի տարեկան –37
- կենսաթոշակառուների թիվը – այդ թվում տարիքային և աշխատանքային թոշակառուներ՝ 37 մարդ,
- հաշմանդամներ - 11 մարդ, մանկուց հաշմանդամներ՝ 2 մարդ
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 0 մարդ
- աշխատունակներ – 218 մարդ
- զբաղվածներ – 34 մարդ
- գործազուրկներ – գրանցված՝ 0 մարդ, չգրանցված 195 մարդ
- տնային տնտեսությունների թիվը – 84
- ընտանիքների թիվը - 132
- ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքների թիվը – 32, այդ թվում նպաստառու ընտանիքների թիվը – 13:

Համայնքի տարածքում տեղակայված չեն ճանապարհային երթևեկության նշաններ՝ չնայած համայնքում շահագործվում են 42 մարդատար և 13 բեռնատար մասնավոր ավտոմեքենա: Համայնքում կան նաև մասնավոր 5 տրակտոր, որից 1-ը թրթուրավոր է, իսկ 4-ը՝ անիվավոր:

-

1.1 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

2013թ. նոյեմբերին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում ընտրվել են համայնքի ավագանին՝ բաղկացած 5 անդամներից, և համայնքի ղեկավարը, որը կազմավորել է համայնքի աշխատակազմը՝ բաղկացած 6 աշխատակիցներից:

ՏԻՄ-ի գործունեության արդյունքում համայնքում իրականացվել և իրականացվում են մի շարք ծրագրեր*.

- 1.Խմելու ջրի ջրամատակարարման համակարգի մասնակի վերանորոգում,
- 2.Համայնքի փողոցների արտաքին զիջերային լուսավորության համակարգի կառուցում,
- 3.Համայնքի սեփականություն համարվող գույքի պահպանություն և նորոգում,

4.Խաղահրապարակի տեղադրում,

5.Բուժպունկտի վերանորոգում և կահավորում:

*Համայնքի ունի շատ ավելի մեծ խնդիրներ, սակայն դրան լուրջ ֆինանսական ներդրումներ են պահանջում, որոնք համայնքապետարանը չի կարող իրականացնել

Ամենամյա աշխատանքներից են

1.Ներհամայնքային ճանապարհների մասնակի բարեկարգում, ձմեռային սպասարկում և մաքրում,

2.մշտական աջակցություն համայնքի գյուղատնտեսական աշխատանքներին/ պետարակ աջակցության շնորհիվ գյուղացիներին մատչելի գներով դիզվառելիք , պարարտանյութ, սերմացուներ մատակարարում,

3.Տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների կազմակերպում և իրականացում,

4.մասնակի աղբահանություն համայնքապետարանի, դպրոցի և հուշարձանների տարածքներում,

5.Խմելու ջրի մշտական մատակարարում և վերահսկողություն պատկան մարմինների անմիջական հսկողությամբ,

6.Անապահով ընտանիքներին օգնության տրամադրում:

ԱՌԱՋԻԿԱ ԾՐԱԳՐԵՐ

1.Ճանապարհի ասֆալտապատում

2.համայնքային կենտրոնի վերակառուցում,

3.մանկապարտեզի կառուցում,

4.ռոտոման ցանցի կառուցում,

5.խմելու ջրի ջրագծի նորոգում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հ/Հ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2016 փաստ	2017 կանխ	2018 կանխ	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
1.	Համայնքի վարչական տարածք	հա	2776.8	2776.8	2776.8	2776.8	2776.8	2776.8
2.	Առկա բնակչություն, այդ թվում	մարդ	353	360	364	370	375	380
	Կանայք	մարդ	165	168	170	173	175	177
	Տղամարդիք	մարդ	188	192	194	197	200	203
3.	Բնակելի առանձնատներ	տուն	76	76	76	77	78	79
4.	Ոռեգելի հողեր	հա	23.0	25.0	25.0	25.0	25.0	25.0
5.	Խմելու ջրի ջրագիծ	կմ	9	9.5	9.5	9.5	9.5	9.5
6.	Ներհամայնքային ճանապարհներ	կմ	3	3	3	3	3	3
7.	Խոշոր եղջերավոր անասուններ	գլուխ	507	515	530	540	550	560
8.	Մանր եղջերավոր անասուններ	գլուխ	785	770	760	750	750	750
9.	Համայնքային սեփականության հողեր	հա	935.91	935.91	935.91	935.91	935.91	935.91
10.	Վարձակալության տրված հողեր	հա	454.58	454.58	454.58	454.58	454.58	454.58
11.	Բնակարանի կարիք ունեցող ընտանիքներ	-	50	50	50	48	48	48
12.	Հանրակրթական հաստատություն	հատ	1	1	1	1	1	1
	Աշակերտներ	մարդ	47	50	55	60	65	70

	աշխատողներ	մարդ	25	25	25	25	25	25
	ուսուցիչներ	մարդ	19	19	19	19	19	19
13.	Առողջապահակ հիմնարկ/ բուժկետ/	հատ	1	1	1	1	1	1
	Այցելուներ	մարդ	353	360	364	370	375	380
	Աշխատողներ	մարդ	1	1	1	1	1	1
14.	Սոցիալապես խոցելի ընտանիքներ	հատ	70	70	69	67	65	60
15.	Կենսաթոշակառուներ	մարդ	37	35	35	38	40	43
16.	Հաշմանդամներ	մարդ	11	11	12	12	13	13
17.	Աշխատունակներ	մարդ	218	220	225	230	235	240
18.	Զբաղվածներ	մարդ	34	34	35	36	38	40
19.	Գործազուրկներ	մարդ	218	220	225	230	235	240
20.	Ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքներ	Հատ	32	33	34	35	36	38
21.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքներ	հատ	13	13	14	15	16	17
22.	Մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտ	Հազդրամ	16.1	16.1	16.1	16.1	17.1	18.0

2.1.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Հ/հ	Կառույցը	Հասցեն	Կառուցման տարեթիվը	Ծավալը	Ընդհանուր վիճակի գնահատա-կանը	Նորոգման / վերականգնման / փոխարինման կարիքը	Այլ նշումներ
1.	Համայնքային կենտրոն	գ. Ձորագլուխ	1964թ.	439,0 քմ		Վերակառուցման, կահավորման	
2.	Ներհամայնքային նշանակության ճանապարհներ	գ. Ձորագլուխ	--	3 կմ	շատ վատ	վերանորոգման	
3.	Գերեզմանատուն	գ. Ձորագլուխ	--	2,5 հա	Անբավարար	Ցանկապատում, էլեկտրական հոսանքի առկայության կարիք	
4.	Անասնազոմ 4 հատ	գ. Ձորագլուխ	1988թ.	3744.0 քմ	Անբավարար	վերանորոգման	
5.	Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգ	գ. Ձորագլուխ		5կմ	բավարար	Մասնակի բարելավման	
6.	հացքաղ կոմբայն SK5	գ. Ձորագլուխ	1986թ.	--	անսարք	փոխարինման	
7.	խոտհնձիչ կոմբայն E302	գ. Ձորագլուխ	1987թ.	--	Բավարար	Մասնակի նորոգման	
8.	էլեկավատոր IOM3-6JI	գ. Ձորագլուխ	1984	--	բավարար	Մասնակի նորոգման	

2.1.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ / ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ / ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՁՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2017-2021 թթ. ընթացքում Ձորագլուխ համայնքում նախատեսվում է համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր անձանց և այլ շահագրգիռ կողմերի հետ, համայնքում իրականացվող և իրականացվելիք ծրագրերը կյանքի կոչելու նպատակով: Պետական ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով նախատեսվում է համագործակցել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Համայնքը ակտիվ համագործակցում է նաև «Վորլդ Վիժն Հայաստան» բարեգործական

ընկերության հետ, նախատեսվում են նաև մի շարք այլ կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում:

**2.1.4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ< ԳՆԱՀԱՏՈՒՄ
ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Համայնքի բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների և ֆինանսական դոտացիաների հաշվին: Սեփական եկամուտները 2016 թվականին կազմում են համայնքի բյուջեի եկամուտների 42.18 %, իսկ ֆինանսական դոտացիաները 57.82%:

Հազար դրամ

Հ/Հ	Մուտքի անվանում	2016 փաստ	2017 կանխ	2018 կանխ	2019 կանխ	2020 կանխ	2021 կանխ
1	2	3	4	5	6	7	8
	Բյուջետային մուտքեր ընդամենը	6328.1	6153.3	8203.3	8203.3	8308.3	8363.3
1.	Հարկեր և տուրքեր	1377.8	1432.0	1482.0	1537.0	1587.0	1642.0
1.1	Գույքահարկ անշարժ գույքից	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0
1.2	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	400.0	450.0	500.0	550.0	600.0	650.0
1.3	Հողի հարկ	975.8	980.0	980.0	985.0	985.0	990.0
1.4	Տեղական տուրք	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2	Պաշտոնական դրամաշնորհներ	3659.3	3659.3	5659.3	5659.3	5659.3	5659.3
2.1	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	3659.3	3659.3	5659.3	5659.3	5659.3	5659.3
ա/	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ	3500.0	3500.0	5500.0	5500.0	5500.0	5500.0
բ/	Պետական բյուջեից տրվող նպատակային հատկացումներ/ սուբվենցիաներ/	159.3	159.3	159.3	159.3	159.3	159.3
3.	Այլ եկամուտներ	1112.0	962.0	962.0	962.0	962.0	962.0
3.1	Գույքի վարձակալությունից եկամուտներ	1112.0	962.0	962.0	962.0	962.0	962.0
ա/	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարներ	425.0	425.0	425.0	425.0	425.0	425.0
բ/	Համայնքի պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	470.0	320.0	320.0	320.0	320.0	320.0
գ/	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	217.0	217.0	217.0	217.0	217.0	217.0
4.	Ֆինանսական ակտիվներ	179.5	100.0	100.0	100.0	100.0	100.0
4.1	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ	179.5	100.0	100.0	100.0	100.0	100.0

2.1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԽՈՉՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը խոչընդոտող գործոններն են.

- Համայնքն արտաքին աշխարհին կապող ճանապարհի անբարեկարգ վիճակ,
- Արտադրված գյուղատնտեսական ապրանքների իրացման դժվարություններ,
- Աշխատատեղերի սակավություն,
- Բնակլիմայական անբարնպաստ պայմաններ,
- Բնակարաշինության բացակայություն,
- Մշակութային կյանքի բացակայություն:

2.1.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ուժեղ կողմերն են.

- աշխարհագրական լավ դիրքը
- Համայնքի գեղատեսիլ բնությունը
- Բնակավայրին հարակից անտառամերձ գոտու առկայությունը
- Համայնքում միջնակարգ դպրոցի և բուժկետի գործելը
- Համայնքում հեռուստատեսության առկայությունը
- Ոռոգման ջրի ներհամայնքային համակարգի առկայությունը
- Համայնքի բնակիչների պատրաստակամություն՝ համայնքի առաջ ծառայած ցանկացած խնդրի լուծման հարցում
- Խմելու ջրի ջրամատակարարման համակարգի բավարար վիճակ

Համայնքի թույլ կողմերն են.

- Համայնքային կենտրոնի անբարեկարգ վիճակ
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների դժվարանցանելիությունը
- Մշակույթի տան բացակայությունը
- Զրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի բացակայությունը
- Համայնքային կենտրոնի և դպրոցի շենքերում ջեռուցման համակարգերի բացակայությունը, դրանց գործարկման դժվարությունները ձմռան ընթացքում
- Ոռոգման ներհամայնքային համակարգի վատ վիճակը
- Խոտհարքների չափաբաժնի պակաս լինելը և վարելահողերի չմշակելը

- Ցանկացած տիպի հասարակական տրանսպորտի բացակայությունը՝ ապահովելու մշտական հաղորդակցություն մարզկենտրոնի, տարածաշրջանային կենտրոնի և այլ համայնքների հետ
- Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաբնույթ խնդիրների ու դժվարությունների առկայությունը
- Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը
- Համայնքի գործող գերեզմանատան ցանկապատի և էլեկտրականության բացակայությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

- Համայնքի ամբողջական գազաֆիկացումը նկատելիորեն կնպաստի համայնքի բնակչության կենցաղային կարիքների բավարարմանը, կփրկի համայնքի անտառային ֆոնդը ոչնչացումից
- Համայնքային կենտրոնի շենքի վերանորոգման դեպքում հնարավորություն կստեղծվի՝ համայնքի գյուղապետարանի, բուժկետի, գրադարանի, հանդիսությունների դահլիճի բարակարգումը՝ հարմարավետ պայմաններ կստեղծի ամբողջական ու լիարժեք գործունեություն և սպասարկում իրականացնելու համար
- Համայնքային կենտրոնի վերանորոգումը կնպաստի համայնքի կյանքի ակտիվացմանը՝ աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը,

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՆ ԵՆ

- Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգի մաշվածության պատճառով համայնքում սուր վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգը
- Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը
- Աղբավայրի բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը
- Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը
- Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը, մասնավորապես՝ մանկապարտեզի և միջնակարգ դպրոցի հետագա լիարժեք գործունեությունը

2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Վերլուծելով համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը, առաջ են գալիս մի շարք հիմնահարցեր, որոնց լուծումը կենսական նշանակություն ունի համայնքի բնակչության համար

- Համայնքն արտաքին աշխարհին կապող ճանապարհի ասֆալտապատում,
- Համայնքային կենտրոնի վերակառուցում կամ բարեկարգում,
- Ոռոգման ցանցի կառուցում,
- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում,
- Մանկապարտեզի կառուցում,
- Գյուղատնտեսության զարգացում,
- Գազաֆիկացում:

2.2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՀԱՐ ՆՊԱՏԱԿԻ / ՏԵՍԼԱԿԱՆԻ/ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի հինգ տարիների տեսլականն է՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր:

2.2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ռազմավարական նպատակ 1. Զարգացնել գյուղատնտեսությունը

Միջոցառումներ

- Համայնքն արտաքին աշխարհին կապող ճանապարհի ասֆալտապատում,
- Դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում,
- Ոռոգման համակարգի կառուցում,
- Արտավայրերը մատչելի գներով վարձակալության տրամադրում

Ռազմավարական խնդիր 2.Բարձրացնել բնակչության ապրելակերպի որակը և տեղեկացվածության աստիճանը

- Մշակույթային կյանքի զարգացում
- Գազաֆիկացում
- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում
- Աղբահանության կազմակերպում
- Ֆուտբոլի դաշտի կառուցում

- Տրանսպորտով ապահովում

Ռազմավարական խնդիր 3. Բարձրացնել տեղական ինքնակառավարման և գործունեության արդյունավետությունը

- Ազգաբնակչության սպասարկման որակի բարելավում
- Խորհրդակցական մարմինների և ավագանու ակտիվ մասնակցություն համայնքի կառավարման գործում
- Անդամակցության համապատասխան հասարակական կազմակերպություններին
- Համայնքապետարանի աշխատակազմի պարբերաբար վերապատրաստում:

Հ/հ	Ծրագրի անվանումը	Չափի միավորը	Ծրագրի քանակական ծավալը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
					2017	2018	2019	2020	2021	Համայնքի բյուջե	Պետր կազմ.-եր	Պետբյուջե, այլ
1.	Համայնքի աշխատակազմի պահպանում	աշխատող	-	19200.0	4800.0	4800.0	4800.0	4800.0		19200.0		
2.	Մանկապարտեզի կառուցում	շենք	1	400000.0	30000.0	15000.0	8000.0	77000.0				400000.0
3.	Միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում	կմ	7	400 000.0	400 000.0							400 000.0
4.	Աղբահանության ծառայության մատուցման մեքենայի վարձակալություն	մեքենա	1	215.5	50.0	52.5	55.1	57.9		215.5		
5.	Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ	միջոցառ.	1	258.7	60.0	63.0	66.2	69.5		258.7		
6.	Համայնքի տրանսպորտային միջոցի և համակարգչային սարքավորումների ձեռքբերում	տրանսպ. միջոց, կոմպլեկտ	1, 2	500.0	350.0	50.0	50.0		50.0	500.0		
7.	Համայնքային կենտրոնի վերանորոգում	շենք	1	4500.0		4500.0				500.0	4000.0	
8.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում	կմ	3	1500.0		1500.0				200.0	1300.0	
9.	Գերեզմանների ցանկապատում և էլեկտրասնուցում			4000.0					4000.0	300.0	3700.0	
10.	Համայնքային կենտրոնի ջեռուցում	քառ. մ	260	5000.0				5000.0		2500.0	2500.0	
11.	Դպրոցի շենքի ընթացիկ նորոգում, ներքին հարդարում փոխարինում և ջեռուցում	քառ. մ	1342	6000.0			6000.0					6000.0
12.	Համայնքի գազամատակարարման համակարգի անցկացում	կմ	7	115 600.0	115 600.0							115 600.0
	Ընդամենը			956774.2	420860.0	25965.5	18971.3	90972.40	4050.0	196474.2	11500.0	921600.0

ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹԹ. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՍՓՈՓԱԳԻՐ

2.2.3. ՀՀԶԾ ՀԵՌԱՀԱՐ ՆՊԱՏԱԿԸ / ՏԵՍԼԱԿԱՆԸ/ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի հինգ տարիների տեսլականն է՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր:

Այս ռազմավարության համար հիմք են հանդիսանում հետևյալ նախադրյալները՝

- Անհրաժեշտ որակյալ մասնագետների և այլ ռեսուրսների առկայություն,
- ՏԻՄ-ի որոշակի փթորձի և բավարար օրենսդրական դաշտի առկայություն,
- Գյուղատնտեսության վարման բարենպաստ պայմաններ,
- Տուրիզմի և գանհատի առանձին ձևերի զարգացման բարենպաստ պայմաններ:
-

2.3 ՀՀԶԻԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

ՀՀԶԾ-ի ֆինանսավորման հիմնական աղբյուրները համայնքապետարանը ակնկալում է միջազգային և բարեգործական կազմակերպությունների, բարերարների, հասարակական կազմակերպությունների, ՀՀ կառավարության, մարզպետարանի, ինչպես նաև համայնքի սեփական եկամուտների հաշվին:

2.3.1. ՀՀԶԾ ՄՈՆՈԹՈՐԻՆԳ

ՀՀԶԾ-ի իրականացման ժամանակահատվածում կենթարկվեն մոնիթորինգի, կմշակվի մոնիթորինգի պլան, որը հնարավորություն կտա համայնքին վերահսկելու իրականացվող ծրագրերը և ամեն տարի մինչև հաջորդ տարվա 1-ին առամայակը պատրաստել մոնիթորինգի հաշվետվություն և կներկայացվի համայնքի ավագանուն, իսկ հաշվետվության մեկ օրինակ կուղարկվի ՀՀ ՏԿԶՆ տեղական ինքկառավարման վարչություն:

3. ՀՀԶԾ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՈՒՄ

ՀՀԶԾ-ի հաստատվելուց հետո կատարվելու է իրազեկման գործընթացը՝ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների, համայնքի ավագանու, աշխատակազմի, համայնքի ընդհանուր ժողովների միջոցով:

4. ՀՀԶԾ ԻԱՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ՀՀԶԾ-ի իրականացման ընդհանուր պատասխանատուն համայնքի ղեկավարն է, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակազմը՝ համայնքի ղեկավար անմիջական վերահսկողությամբ:

5. ՀՀԶԾ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՀՀԶԾ իրականացումը պետք է գնահատվի, որի արդյունքում պատասխան կտրվի երեք հիմնական հարցի

1. Ինչպես է ծրագիրն իրականացվել կամ իրականացվում

2. Ինչ ազդեցություն է այն ապահովել

3. Արդյոք ստեղծված արդյունքներն արդարացնում են այն ծախսերը, որոնք իրականացվել են արդյունքներն ապահովելու համար:

Գնահատման համարն տեղեկատվական բազան ապահովում է մոնիթորինգի միջոցով:

Գնահատման հիմնական նպատակը ծրագրի իրականացման ժամանակ եղած թերությունների , դրանց պատճառների բացահայտումն է , որոն շտկելու հնարավորություններ ու լուծումներ են առաջարկվում:

6. ՀՀԶԾ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՀՀԶԾ-ն համայնքի տեսլականի, նպատակների, ձգտումների, և ջանքերի ամփոփումն է մեկ փաստաթղթում: ՀՀԶԾ-ն համայնքի առավել կարևոր հարցերի արտացոլումն է:

Համայնքի բնակչությունը ՀՀԶԾ-ի նկատմամբ պետք է ունենա սեփականության զգացում, օժանդակություն և ներդրում ապահովեն ծրագրերի իրականացման գործում: Այսինքն ծրագրերի իրականացումը կատարվելու է համայնքի ամբողջ բնակչության անմիջական մասնակցությունը: